ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ
Գետարգել համայնք, հեռ .6-14-88,getargel-gt@ mail.ru

12.06.2020թ.
N 166

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պետրոսյան

Ձեզ է ներկայացվում Գետարգել համայնքի ղեկավարի ընթացիկ շաբաթվա կայացրած որոշումները:

Առդիր 5 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝Գ.Ազիզյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ
Գետարգել համայնք,հեռ.0222 6-14-88,getargel-gt@ mail.ru

11 հունիսի 2020 թվական N 24-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

գ. Գետարգել

Համաձայն << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 –Ն որոշմամբ հաստատված կարգի որոշում եմ

1. Քաղաքացի Արշակ Փարվանյանի սեփականության իրավունքով պատկանող Գետարգել համայնքի 2-րդ փողոց թիվ 14 հասցեի / կադաստրային ծածկագիր 07-058-0020-0005/ հողակտորում տալ ավտոտնակի և ծածկարանի կառուցման նախագծային փաստաթղթեր մշակման համար:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քարտուղար Գեղանուշ Ազիզյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արշակ Փարվանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվա հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2020թ 11-ը հունիսի
Գ. Գետարգել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գետարգել համայնք, հեռ, 0222/ 6-14-88/ getargel-gt@ mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 11>> հունիսի 2020 թվականի N 25

ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 4/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն,Գետարգել համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 11-ի թիվ 08-Ա որոշումների և հաշվի առնելով Հովհաննես Հայրապետյանի համաձայնությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գետարգել համայնքային սեփականություն հանդիսացող / հիմք վկայական № 11032020-07-0092/ Գետարգել համայնք 1-ին փողոց 1-ին նրբանցք թիվ 4/1 հասցեում գտնվող պարիսպը՝ 9.78 քմ մակերեսով և դրա պահպանման և սպասարկման համար առանձնացված 0.021846 հա բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Հովհաննես Հայրապետյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) պարիսպի 1 քառակուսի մետրի համար՝ 5 200 (հինգ հազար երկու հարյուր) դրամ (տարածագնահատման 7-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.26).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4 524 (չորս հազար հինգ հարյուր քսանչորս) դրամ

4. Հովհաննես Հայրապետյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900105229216 հաշվեհամարին՝ 50 860 (հիսուն հազար ութ հարյուր վաթսուն) դրամ՝ պարիսպի գինը.

2) համայնքապետարանի 900105229174 հաշվեհամարին՝ 988 320 (ինը հարյուր ութսունութ հազար երեք հարյուր քսան) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Հովհաննես Հայրապետյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Հայրապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

11-ը հունիսի 2020թ.
գ. Գետարգել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ
Գետարգել համայնք,հեռ.0222 6-14-88,getargel-gt@ mail.ru

11 հունիսի 2020 թվական N 26-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

գ. Գետարգել

Համաձայն << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 –Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Գևորգ Մալխասյանի դիմումը որոշում եմ

1. Գևորգ Մալխասյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գետարգել համայնքի 5-րդ փողոց թիվ 3 հասցեի հողակտորում տալ բնակելի տան և պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):
2. Պարտավորեցնել քաղաքացի Գևորգ Մալխասյանին

   1) շինարարական աշխատանքները սկսելուց առաջ առնվազն երեք օրվա ընթացքում տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը, համաձայն N5 ձևի :

   2) մուծել սահմանված տեղական տուրքերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գևորգ Մալխասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվա հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2020թ 11-ը հունիսի
Գ. Գետարգել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գետարգել համայնք, հեռ, 0222 6-14-88, getargel-gt@ mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> հունիսի 2020 թվականի N 27-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԵՓՐԵՄ ԳԱՌՆԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԱՍՏԻՃԱՆԻ ԵՎ ՊԱՐԻՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Եփրեմ Մանուկյանի դիմումը, որով ցանկություն են հայտնել իր կողմից 6-րդ փողոցի N 21 հասցեում ինքնակամ կառուցված 202.76 քմ բնակելի տունը, 5.60 քմ աստիճանը և 11.16 քմ պարիսպը օրինականացնելու

Ղեկավարվելով 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 9,10,11,13 ենթակետերի պահանջներով, քաղաքացի Եփրեմ Մանուկյանի դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք. որոշում եմ

1. Քաղաքացի Եփրեմ Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Գետարգել համայնքի 6-րդ փողոցի N 21 հասցեում գտնվող բնակավայրի նշանակության 0.07 հա հողամասում ինքնակամ կառուցված S= 202.76 քմ բնակելի տունը, S= 5.60 քմ աստիճանը և S = 11.16 քմ պարիսպը համարել օրինական:
2. Քաղաքացի Եփրեմ Մանուկյանը պարտավոր է համայնքային բյուջե՝ 900105229216 հաշվեհամարին մուծել բնակելի տան համար 527 180 / հինգ հարյուր քսանյոթ հազար հարյուր ութսուն / ՀՀ դրամ, աստիճանի համար 8740 / ութ հազար յոթ հարյուր քառասուն / ՀՀ դրամ և պարիսպի համար 17 410 / տասյոթ հազար չորս հարյուր տաս / ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գետարգել համայնքի բյուջե՝ 900105229216 հաշվեհամարին 553 330 /հինգ հարյուր հիսուներեք հազար երեք հարյուր երեսուն / ՀՀ դրամ օրինականացման վճարը մուծելուց հետո:
4. Որոշման ընդունման օրվանից ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման գումարը 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումի հատվածը դադարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Ա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2020թ. 12-ը հունիսի
գ. Գետարգել